7750

3КП2(47.924)
Ц-21

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք!

ՀԱՎԵԼՎԱԾ «ԽՈՐՀՐԴԱՅԻՆ
ՂԱՐԱԲԱՂ» ԹԵՐԹԻ № 125-Ի

2.4 SEP 2006
1 DEC 2006

# Ադրկոմկուսի (բ) Ղարբերջկոմի յեվ Շրջվերհանձի միացյալ Պլենումի բանաձեվերը

ЗКП2(47.924)
Ղ - 21

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ 1933

Гос. Публ. Библиотека
ՀՍՍՀ - ССРА

17.09.2013
7750
10818
115

# ԳԱՐՆԱՆԱՑԱՆԻ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՅԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԱՅԻՆ-ԲԵՐՔԱՀԱՎԱՔԱՅԻՆ ԳՈՐԾԱՐՇԱՎԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ադրկոմկուսի (բ) Ղարշրջկոմի և Ղարշրջվերհանձի միացյալ պլենումը նշում է, վոր Ղարաբաղի կուսկազմակերպությունը կուսակցության գլխավոր գիծն անշեղորեն կիրառելու հիմունքով և Համկոմկուսի (բ) Անդրերկրկոմի ու Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի անմիջական ղեկավարությամբ, ղեկավարվելով կոլխոզների կազմակերպչա-տնտեսական ամրապնդման մասին Համկոմկուսի (բ) Կենտկոմի 1932 թվի փետրվարի 4-ի վորոշումով, ճշտորեն դասավորելով կուսակցական և կոմյերիտական ուժերը, հենվելով առաջավոր կոլխոզնիկների ու աշխատավոր մենատնտեսների վրա, ձեռք է բերել գարնանացանի ժամկետից առաջ կատարումը։ 2500 հեկտար բամբակի պլանը ժամկետից առաջ ավարտել է 1933 թվի մայիսի 7-ին, Շրջանում գարնանացանի պլանը 1933 թվի մայիսի 25-ին կատարվել է 110.7 տոկոսով։ Ագրոմինջոցառումների պլանը կատարվել է՝ հողերը թփուտներից մաքրելու գծով—118.4 տոկոսով, քարերից ազատելու գծով—194.4 տոկոսով, պարարտացման գծով—134.3 տոկոսով։ Սերմերի զտումը կատարված է 100 տոկոսով։ Հացահատիկային կուլտուրաների տարածությունը 1932 թվի 16288 հեկտարի դիմաց այս տարի հասել է 18027 հեկտարի (աճը՝ 11 տոկոսով)։ Կերային կուլտուրաների տարածությունը՝ անցյալ տարվա 3092 հեկտարի դիմաց՝ այս տարի հասել է 4090 հեկտարի (աճը՝ 32 տոկոսով), այդ թվում յեգիպտացորենի տարածությունը 1932 թվի դիմաց ավելացել է 78 տոկոսով, ճակնդեղինը՝ 74 տոկոսով, սիլոսային կուլտուրաներինը՝ 14 տոկոսով, ինչ ապահովում է Շրջանի սոցիալիստական անասնապահության հետագա զարգացման համար կայուն կերային բազայի ամրապնդումը։

Միացյալ պլենումը նշում է, վոր այս հաջողությունները ձեռք

են բերվել կուլակության և նրա գործակալության դեմ մղվող դասակարգային համառ պայքարում, և գյուղում տարվող աշխատանքների մասին Համկոմկուսի (բ) Կենտկոմի և Կենտվերհանձի հունվարյան պլենումում արված ընկ. Ստալինի ցուցմունքների և հարվածային կոլխոզնիկների համամիութենական համագումարում նրա արտասանած ճառի հիմունքով կուսմասսայական աշխատանքների վերակառուցման միջոցով—բարձրացնելով աշխատանքային կարգապահությունը կոլխոզներում, մաքրելով կոլխոզները կուլակային, հակախորհրդային և անհարազատ տարրերից, վտարելով ծույլերին, լոդըրներին, գողերին և ժուլիկներին։ Մի կողմից էլ ավելի ամրապնդելով կոլխոզնիկների համոզմունքը կոլխոզների առավելությունների և ձեռնտվության մասին, մյուս կողմից ապահովելով աշխատավոր մենատնտեսների առողջ հոսանքը դեպի կոլխոզներ, ինչի հետևանքով լենինյան կամավորության հիմունքով գարնանացանի ժամանակ կուսկազմակերպությունը Շրջանում ձեռք է բերել 55.85 տոկոսով կոլեկտիվացում (գարնանացանի ժամանակաընթացքում կոլխոզներն են մտել 1700 չքավոր-միջակային տնտեսություններ, վորոնք և բոլոր տնտեսությունների 6.55 տոկոսն են կազմում)։

Դրա հետ միաժամանակ Ադրկոմկուսի (բ) Ղարշրջկոմի և Ղարշրջվերհանձի միացյալ պլենումը նշում է, վոր ռայոնական և գյուղական առանձին կազմակերպությունների կողմից բավականաչափ չէ, վոր յուրացվել է դասակարգային պայքարի արդի տակտիկան, բավականաչափ չէ, վոր պայքար է կազմակերպվել լոդրների և ծույլերի դեմ, և կոլխոզները կուլակային ու հակախորհրդային տարրերից մաքրելու համար, բավականաչափ չէ, վոր հակահարված է տրվել կուլակային դիմադրություններին ու մախինացիաներին — առանձնապես կերանյութերի և սերմերի շռայլման ուղղությամբ (Մարտունու և Ստեփանակերտի ռայոնները), օպորտունիստորեն թերագնահատվել է առանձին կուլտուրաների, առանձնապես կերակուլտուրաների, պլանի կատարումը, բավականաչափ չէ, վոր պայքար է ծավալվել՝ բերքատվությունը բարձրացնելու համար ագրոմիջոցառումները կիրառելու ուղղությամբ և թույլ է ծավալվել աշխատանքը մենատնտեսների միջեվ։

Ադրկոմկուսի (բ) Ղարշրջկոմի և Ղարշրջվերհանձի միացյալ պլենումը—հերթական խնդիր դնելով կուսկազմակերպության առաջ ցանքի ընթացքում ձեռք բերված հաջողությունների ամրապնդումը, ցելերը ժամանակին բարձրացնելու և ցանքերի մշակման վորակը բարձրացնելու ճանապարհով և բերքահավաքն օրինակելի կերպով անցկացնելու, կալսումներն առանց կորուստների և սահմանված ժամկետներին առանց հափշտակումների կատարելու շուրջը լայն աշխատավորական մասսաներին հավաքագրելու միջոցով բարձր բերք ստանալը,—վորոշում է.

## I. ՄՇԱԿՈՒՅԹԱՅԻՆ ԳՈՐԾԱՐՇԱՎԻ ՄԱՍԻՆ

Մշակույթային սոսկ տնտեսական և քաղաքական նշանակություն տալով, պարտավորացնել կուսակցական, խորհրդային և հողային մարմիններին՝ մշակույթի գծով կոնկրետ բանվորական պլաններ կանխագծել, մշակույթային գործարշավին կանանց բանուժը լայնորեն ներգրավելով, հավաքագրելով բոլոր ագրոուժերը հացահատիկային կուլտուրաների, կերաարմատապտուղների և առանձնապես բամբակի մշակույթային գործարշավի համար, ինչպես կոլխոզային՝ նույնպես և մենատնտեսական սեկտորների գծով ագրոմիջոցառումների անառարկելիորեն կենսագործման պատասխանատվությունը բարդելով գյուղխորհուրդների և կոլխոզների վարչությունների նախագահների վրա, պլանները հասցնելով կոլխոզներին, բրիգադներին ու մենատնտեսներին։

## II. ԲԵՐՔԱՀԱՎԱՔԱՅԻՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Բերքահավաքային գործարշավի համար մեքենաների վերանորոգումն ապահովելու նպատակով, հաշվի առնելով գարնանացանի ընթացքում ձեռք բերված փորձառությունը, պարտավորացնել ցանքյոռյակներին, սովխոզների և ՄՏԿ դիրեկտորներին՝ ավարտել բերքահավաքային մեքենաների վերանորոգումը—դաշտային զոնայում մինչև հունիսի 5-ը, իսկ լեռնային զոնայում մինչև հունիսի 10-ը, կոլխոզներում և սովխոզներում գյուղատնտեսական մեքենաների վերանորոգման ընթացքը հսկելու համար հատուկ բրիգադներ ստեղծելով և հատուկ ուշադրություն դարձնելով վերանորոգումների վորակին, բերքահավաքից 5 օր առաջ ստուգել մեքենաների դրությունն ու պատրաստվածությունը—բերքահավաքի ուղղությամբ անխափան աշխատելու համար։

## III. ԲԵՐՔԱՀԱՎԱՔԻ ՀԱՄԱՐ ԲԱՆԱՆՈՍՈՒՆՆԵՐԻՆ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ադրկոմկուսի (բ) Ղարշրջկոմի և Ղարշրջվերհանձի միացյալ պլենումը պահանջում է կուսակցա-

կան և խորհրդային կազմակերպություններից, կոլխոզների վարչություններից և սովխոզների ու ՄՏԿ դիրեկտորներից հատուկ ուշադրություն դարձնել բերքահավաքի համար բանանասուններին նախապատրաստելու գործին, ինչի համար առանձնացնել բոլոր հյուծված անասուններին, լրապես ազատել ամեն տեսակի աշխատանքներից և հունիս ամսվա ընթացքում կազմակերպել նրանց լիորյա (գիշեր-ցերեկ) արածացումը: Բանանասունների խնամքըն ու նրանց համար պատասխանատվությունը բարդել գործով ստուգված կոլխոզնիկների ու սովխոզային բանվորների վըրա, նրանց վարձատրությունը կախյալ դրության մեջ դնելով նրանց կողմից աշխատունակ դարձված բանանասունների գըլխաքանակից:

Պարտավորեցնել ռայգործկոմներին, գյուղխորհուրդներին և գյուղական կուսկազմակերպություններին՝ այնտեղ, որտեղ մենատնտեսների անասունները հյուծված են արտադրական օգնություն հասցնել կալսիչ մեքենաներով և հենց դրանով մենատնտեսներին հնարավորություն տալ անասուններին ազատելու աշխատանքից—այդ անասուններին աշխատունակ դարձնելու համար:

## IV. ԽՈՏԱՀԱՎԱՔԻ ՅԵՎ ՍԻԼՈՍԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հաստատելով Ադրկոմկուսի (բ) Ղարշջկոմի բյուրոյի ընդունած պլանները—խոտահարքի գծով 11685 հեկտար կամ 93375 ցենտներ, և սիլոսի գծով 817 հեկտար կամ 94720 ցենտներ, պլենումը բոլոր կուսակցական և խորհրդային կազմակերպությունների հատուկ ուշադրությունն է հրավիրում պատշաճ բեկումն ստեղծելու խոտահարքում, պլանը կոլխոզներին ու սովխոզներին հասցնել ոչ միայն հեկտարներով, այլ և խոտի ու սիլոսի քանակով, այն հաշվով, որ լիապես բավարարվի հանրայնացված և չհանրայնացված անասունների կարիքը և խոտի ու սիլոսի անձեռնմխելի պաշար ստեղծվի գարնան համար: Չթույլ տալ խոտերի և սիլոսի չափից դուրս թափված պահումն: Ամբողջ աշխատանքն անցկացնել «ոչ մի հեկտար խոտատեղի և ոչ մի փունջ խոտ չհավաքված» նշանաբանի տակ, հարված խոտն ու սիլոսն անառարկելիորեն ու առանց ուշացումների անասունների ձմեռանոցներն ու սիլոսացման տեղերը տեղափոխել:

Ստուգված կոլխոզնիկներից հատուկ դիզողներ առանձնացնել և խոտահավաքի, առանձնապես սիլոսային աշխատանքների գըծով ամբողջ պատասխանատվությունը բարդել ֆերմաների վարիչների վրա, որոնք պատասխանատու յեն ինչպես ժամանակին սիլոսացման համար, նույնպես և խոտի դիզման որակի, պահպանման և ռացիոնալ օգտագործման համար:

Պարտավորեցնել կոլխոզների վարչությունների նախագահներին ու ֆերմաների վարիչներին, սովխոզների դիրեկտորներին ու տեղամասերի վարիչներին՝ սահմանված ժամկետների համաձայն ավարտել սիլոսային կառուցումների վերանորոգումներն ու նոր շինարարությունները, պարբերաբար զեկուցել Ադրկոմկուսի (բ) Ղարշջկոմի և Ի. Լ. Ղարաբաղի ռայկոմների բյուրոներում խոտահարքի, սիլոսացման և սիլոսային շինարարության ընթացքի մասին, համապատասխան կոնկրետ միջոցները ձեռնարկելով:

## V. ՀԱՑԱՀԱՏԻԿԱՅԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ՀՆՁԻ ՅԵՎ ԿԱԼՍՄԱՆ ՅԵՎ ԲԵՐՔԸ ՀԱՓՇՏԱԿՈՂՆԵՐԻՑ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաստատել ինչպես աշնանացանի, նույնպես և գարնանացանային հացահատիկային բոլոր կուլտուրաների, հնձի յենթակա տարածությունը 64797 հեկտար, այդ թվում՝ սովխոզային սեկտորի գծով— 2361 հեկտար, կոլխոզային սեկտորի գծով— 32729 հեկտար և մենատնտեսական սեկտորի գծով—29707 հեկտար:

Բոլոր տեսակի բերքահավաքային մեքենաներով հացահատիկային կուլտուրաների հնձելու տարածությունը սահմանել, կոլխոզների գծով— 6100 հեկտար և Մորդակերտի ՄՏ-կայանի գծով—1640 հեկտար:

Շրջանում մեխանիկական միջոցներով հացահատիկներ կալսելու չափ սահմանել ՄՏԿ միջոցով —26200 ցենտներ:

Բերքահավաքային մեքենաների աշխատանքի արտադրողականության հետևյալ նորմաներն ու տևողությունները սահմանել. ամեն տեսակի կալսիչների նկատմամբ—օրական 21 ժամ, սեզոնային բեռնավորումն տրակտորային խուրձակապերի նկատմամբ—յուրաքանչյուր մեքենային սեզոնում— 120 հեկտարից ոչ պակաս, ձիաքարշ խուրձակապների, հնձիչների և հարիչների նկատմամբ 80 հեկտար:

Կալսիչները ռացիոնալ կերպով օգտագործելու համար անհրաժեշտ համարել յերկվանդ աշխատանքը—հսկելով գիշերային աշխատանքի որակին:

Բոլոր հացահատիկային կուլտուրաների նկատմամբ, նրանց հասունացման մոմենտից, հնձի տևողություն սահմանել 8—9 օր, գարնան ցորենի և ուկրաինկայի նկատմամբ՝ 5—6 օր, իսկ մնացած հացահատիկային կուլտուրաների նկատմամբ՝ 10 օր: բերքահավաքն սկսել չսպասելով հացի ընդհանուր հասունացմանը, կատարելով յուրաքանչյուր տեղամասի հացը նրանում

ցանված հացահատիկների հասունացման չափով, ինչի համար դաշտավարական բրիգադները հետազոտողներ են առանձնացում՝ ցանքերի դրությունն ստուգելու և հնձի ճիշտ ժամանակները սահմանելու համար։

Հնարավոր համարել հացահատիկների հնձի և կալսման հետևյալ սահմանային ժամկետներ սահմանելն ըստ զոնաների.

Դաշտային զոնա. հունձը՝ հունիսի 7-ից մինչև հուլիսի 15-ը, կալսումը՝ հունիսի 10-ից մինչև հուլիսի 25-ը,

Միջին զոնա, հունձը՝ հունիսի 25-ից մինչև հուլիսի 25-ը, կալսումն՝ օգոստոսի 1-ից մինչև օգոստոսի 10-ը,

Լեռնային զոնա. հունձը հուլիսի 1-ից մինչև օգոստոսի 20-ը, կալսումն՝ հուլիսի 5-ից մինչև օգոստոսի 25-ը։

Պարտավորեցնել Ի.Լ. Ղարաբաղի Շրջգործկոմին վորոշել գյուղերն ու կոլխոզները կայուն ժամկետներով և հայտարարել մամուլում։

Պարտավորեցնել կոլխոզների վարչություններին ու սովխոզների դիրեկտորներին՝ հնձից հետո կորուստների դեմ պայքարելու նպատակով, պարտադիր կերպով անցկացնել հասկերի հավաքումն ձիաքարշ և ձեռքի փոցխերով, այս նպատակով առաջ քաշել առանձնապես կանանց բրիգադներին՝ արտադրաչափեր և աշխատանքի՝ վարձատրման նորմաներ սահմանելով։

Սովխոզների և ՄՏԿ դիրեկտորներին, առանձնապես «Սոցիալիզմի հաղթանակ» սովխոզին՝ ապահովել բոլոր հնձված հացահատիկների խրձկապումն ու ժամանակին տեղափոխումն, ինչի համար սահմանված ժամկետներում Համկոմկուսի (բ) Կենտկոմի և ԽՍՀՄ-ի Ժողկոմխորհի 1933 թվի մայիսի 24-ի վորոշման հիմունքով վերանորոգել և պատրաստել ամբողջ սայլաշարային տրանսպորտը։

Սովխոզների և կոլխոզների բոլոր արտադրական խորհրդակցություններում, փորձված կոլխոզնիկ հացամշակների մասնակցությամբ, քննարկել հացահատիկային կուլտուրաների հավաքման պլանը—բերքահավաքի ուղղությամբ բոլոր տեսակի աշխատանքների կոնկրետ ժամկետները կանխագծելով։

Ռայցանքյեռյակներին՝ ավարտել կալսիչների և այլ բերքահավաքային հարմարությունների վերանորոգումը—դաշտային զոնայում մինև 1933 թվի հունիսի 10-ը, իսկ միջին և լեռնային զոնաներում՝ մինչև 1933 թվի հունիսի 20-ը։

Հափշտակումների դեմ պայքարելու նպատակով հացահատիկների պարտադիր կշռումը սահմանել (կշռով կամ ստուգված չափերով)—անմիջապես կալսիչների մոտ կամ կալերում և հացահատիկներն ընդունելու ժամանակ շտեմարաններում։ Հացահատիկները կալերից (կալսման վայրերից) շտեմարաններն ուղարկել ուղեգրերով (նակլադնոյներով), վորոնց մեջ պիտի նշվեն կուլտուրաների տեսակները, ճիշտ քանակն ու վորակատեսակը (սորտը) և պակսելու դեպքում պիտի անհապաղորեն ստուգել ամեն մի դեպք։

Սերմի համար կատարված ցանքերի բերքի կալսումն, զտումն ու տեսակավորումն կատարվում են առանձին և հանձնվում են հատկապես առանձնացված շտեմարաններին,

Բոլոր կոլխոզային շտեմարանները պիտի կանխավ առանձնացված լինեն, վերանորոգված, ախտահանված և համարակալված։ Նրանց ցուցակները պիտի լինեն ռայհողվարչություններում։

Կտրականապես արգելել դաշտերում կալսիչների մոտ ավանսներ բաժանելը, պետական պարտավորությունների և սերմեր առանձնացնելու թերակատարումն.

Առաջարկել ռայոնական խորհրդային և կուսակցական կազմակերպություններին, առանձնապես բանգյուղտեսչության մարմիններին՝ վերակառուցել վերստուգիչ հանձնաժողովների աշխատանքները կոլխոզներում—նրանց պատասխանատվությունը բարձրացնելու և ամբողջ հավաքված բերքը հափշտակումներից պաշտպանելու գործում նրանց ներգրավելու անկյունատեսով։

Բերքը կուլակային ոտնձգումներից և հրդեհի դեպքերից պահպանելու նպատակով՝ անձնապես պարտավորեցնել սովխոզների դիրեկտորներին և կոլխոզների վարչությունների նախագահներին դեզերի մոտ ամբողջ որյա (գիշեր-ցերեկ) պահակներ սահմանել, դեզերի շուրջն ակոսներ անցկացնել և ջուր լինելու դեպքում ջրով լցնել ակոսները։ Կտրականապես արգելել հացահատիկների դեզերի մոտ ծխելն ու կրակ վառելը։

Շրջհողվարչությանը 20-ից վոչ պակաս հրշեջային հարմարություններ ձեռք բերել սովխոզների ու խոշոր կոլխոզների համար։

Դատական-պատժիչ մարմիններին՝ հավաքված բերքի հափշտակումների, շռայլումների և նրանց նկատմամբ անփույթ վերաբերվելու ամեն մի դեպք վորակավորել իբրև կուլակային պրակտիկա և վնասատվություն, կոնկրետ հանցապարտներին 1932 թվի օգոստոսի 7-ի օրենքի հիմունքով դատական ամենախիստ պատասխանատվության յենթարկելով։

## VI. ԹՈՒԹԸ ՀԱՎԱՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կոլխոզների վարչությունների նախագահներին ու գյուղական

կուլտ. կազմակերպություններին պարտավորացնել՝ թթի հավաքման և ողեթորման պետական տնտեսական նշանակությունը. բերքահավաքի այլ աշխատանքների հետ, թթի բերքահավաքի կոնկրետ աշխատանքային պլանը կանխագծել, հատուկ և ժամանակավոր բրիգադներ առանձնացնել, մասսայական չափերով այս ասպարեզում օգտագործելով կանանց ամբողջ բանակը:

## VII. ԿԱՐՏՈՖԻԼԻ ՅԵՎ ԲԱՆՋԱՐԱՆՈՑԱՅԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ԲԵՐՔԱՀԱՎԱՔԻ ՄԱՍԻՆ

Պատասխանատու ճանաչել և պարտավորեցնել կոլխոզների վարչությունների նախագահներին ու սովխոզների և հիմնարկությունների բանմատակարարման ղեկավարներին՝ կոնկրետ և օպերատիվ պլան կանխամշակել, դասավորելով ուժերը, հաշվի առնելով կուլտուրաների պայմանները ու առանձնահատկությունները, բանջարանոցների և մերձքաղաքային տնտեսությունների կարտոֆիլի և այլ կուլտուրաների բերքահավաքի ժամկետները սահմանել և կորուստների դեմ պայքարելու և բերքը հետագայում պահպանելու նպատակով կանխավ հարմարություններ պատրաստել՝ այդպիսիններն ընդունելու և պահպանելու համար:

## VIII ՊՏՂԱՏՈՒ ՅԵՎ ԽԱՂՈՂԻ ԱՅԳԻՆԵՐԻ ԲԵՐՔԱՀԱՎԱՔԻ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով պտղաքաղում մեր ունեցած անցյալ տարվա փորձը, վոր նրա չկազմակերպվածության հետևանքով մեծ տոկոսով բերքի կորուստ ենք ունեցել, չհասունացած պտուղների քաղը վատացրել և արդյունքի վորակը, պարտավորեցնել կոլխոզների վարչություններին, որ արտադրական խորհրդակցություններում քննարկել բերքահավաքի աշխատանքային պլանը, մաքսիմալ չափերով օգտագործելով կանանց բանակը, ձեռք բերել բերքահավաքի և մշակումների հաջող անցկացումն:

## IX. ԱՐՄԱՏԱՊՏՈՒՂՆԵՐԻ ԲԵՐՔԱՀԱՎԱՔԻ ՄԱՍԻՆ

Արմատապտուղներն անասնապահության, առանձնապես խոզաբուծության կերային բազայի հիմնական աղբյուրներից մեկն են հանդիսանում: Հաշվի առնելով այդ և այն հանգամանքը, վոր մեքենայական աշխատանքների (քաղհան, նոսրացում, կուլտիվացիա) ճիշտ կազմակերպումն ապահովում է բարձր բերք և ժամանակին կատարված բերքահավաքն ապահովում է նրանց ձմեռային դիմացկունությունը,—Պլենումն առաջարկում է կոլխոզների վարչություններին ու սովխոզների դիրեկտորներին՝ ճշտորեն կիրառել ագրոնոմիական ցուցմունքները, ճշտորեն կազմակերպել բերքահավաքը, այդ աշխատանքները ներդաշնակելով կոլխոզային աշխատանքի այլ տեսակների հետ:

## X. ՍԵՐՄԱՅԻՆ ՅԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՖՈՆԴԵՐԻ ՄԱՍԻՆ

Հաստատել սերմային ֆոնդ կազմելու պլանը, առաջարկել Շրջգործկոմին սերմային և ապահովագրական ֆոնդեր կազմելու պլանները—այդ պլանները ճշտելու նպատակով—քննարկել բոլոր կոլխոզներում և աշխատավոր մենատնտեսների ընդհանուր ժողովներում, այն հաշվով, վոր ապահովվեն 1933 թվի աշնանացանի և 1934 թվի գարնանացանի պլանները, ցանքերի կայուն պլանները ինչպես սովխոզային և կոլխոզային, նույնպես և մենատնտեսական սեկտորների գծով հասցնելով տեղերին:

Պարտավորեցնել կոլխոզների վարչությունների նախագահներին, նրանց անձնական պատասխանատվությամբ, ապահովել պատշաճ խնամքով սերմային ֆոնդերը և թույլ չտալ այդ ֆոնդերի հափշտակումները: Հափշտակումների ամեն մի դեպք վորակավորել իբրև կուլակային [illegible] և կոնկրետ հանցագործներին դատական պատասխանատվության յենթարկել—սոցիալիստական սեփականության պաշտպանության մասին օրենքով:

Պարտավորեցնել գյուղխորհուրդների և կոլխոզների վարչությունների նախագահներին, վերականգնել անցյալ տարվա ապահովագրական ֆոնդը և նոր բերքից սերմային ֆոնդի նկատմամբ 15 տոկոսյա առանձնացում կատարել: Նախազգուշացնել գյուղական կուսակցական, խորհրդային կազմակերպություններին ու հողային մարմիններին, վոր սույն վորոշումը չկատարելու համար գյուղխորհուրդների և կոլխոզների վարչությունների նախագահները դատական և կուսակցական խիստ պատասխանատվության են յենթարկվելու:

Ապահովագրական ֆոնդի առանձնացումը նույնպես պարտադիր է մենատնտեսական սեկտորի համար:

## XI. ՑԵԼ ԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Պլենումը նշում է, վոր ցել անելը բերքատվությունը բարձրացնելու վճռական և հիմնական միջոցառումներից մեկն է հանդիսանում, և առաջարկում է կուսակցական ու խորհրդային կազմակերպություններին 18.700 հեկտար ցելի հաստատված պլանն անառարկելիորեն կատարել, այս նպատակով Համկոմկուսի (բ) Կենտկոմի և ԽՍՀՄ-ի Ժողկոմ-

խորհի վորոշման հիմունքով կոնկրետ և օպերատիվ միջոցներ կանխագծել՝ այդ բնագավառում պատշաճ բեկում ստեղծելու համար։

## XII. ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մշակույթային բերքահավաքային գործարշավի հաջող կատարումը կախված է կոլխոզներում, աշխատանքի կազմակերպումից ուստի՝ կուսակցական կազմակերպությունները պետք է հավաքագրեն իրենց բոլոր ուժերը կոլխոզներում աշխատանքի 7 կարգի գնահատման անցկացումն ավարտելու, արտադրական բրիգադների պատասխանատվությունը բարձրացնելու համար, պետք ճշտորեն դասավորեն ուժերը, պետք պլանները ժամանակին հասցնեն կոլխոզներին, բրիգադներին, կոլխոզնիկներին և մենատնտեսներին, պետք բարձրացնեն աշխատավորական լայն մասսաների ինքնագործունեությունն ու խանդավառությունը, պետք ծավալեն սոցմրցումն ու հարվածայնությունը և պետք սոցիալիստական փոխօգնություն կազմակերպեն կոլխոզների և գյուղերի միջև։

***

Ադրկոմկուսի (բ) Ղարշրջկոմի և Ղարշրջվերհանձի միացյալ պլենումը կոչ է անում կուսակցական, խորհրդային և հողային բոլոր կազմակերպություններին՝ հաշվի առնել, վոր գարնանացանի պլանի կատարման հաջողությունները գործի սկիզբն են, վոր լարվածությունն ու պատասխանատվությունն են պահանջվում՝ այդ հաջողությունները բերքահավաքային գործարշավի ժամանակ ամրապնդելու նպատակով պայքարելու համար, վոր տեղ գյուղատնտեսական աշխատանքը հյուսվում է ներկա ժամանակի յերկարությամբ։ Ցել անելը, ցելերն ու ցանքերը խնամելը, խոտահարքը, բերքահավաքը, կալսումը, պետությանը հացահատիկներ հասցնելը, աշնանացանը, սառնացել անելը — այս բոլորը միայն մի թվարկումով գարնանացանի խնդիրների հետ համեմատվել չի կարող։

Միացյալ Պլենումը պահանջում է կուսկազմակերպություններից գլխավորել և օպերատիվ ղեկավարություն ցույց տալ մասսաների շարժմանը՝ կոլխոզային արտադրության բարձր վորակի համար, վտարելով լոդրներին, ծույլերին, դձլողներին (ավաչներին), ապահովել աշխկարգապահության ամրապնդումը, կուլակների և հափշտակումների դեմ պայքարը, կոլխոզների կազմակերպչա-տնտեսական ամրապնդման համար, բարձր բերքի համար մղվող պայքարը, ապահովել բոլոր կոլխոզնիկներին ունևորներ դարձնելը։



Սոցմրցումն ու հարվածայնությունը բերքահավաքային գործարշավի ժամանակ պետք բարձր աստիճանի հասցնել և նրանց բոլոր նոր ձևերը — յետ մնացողներին առաջատարների կողմից առաջ մղելը, փոխադարձ ստուգման կազմակերպումն, ագրոավագների առանձնացնելը, իդեատվյան շարժման ծավալումն — հիմնական լծակները դառնան՝ բերքահավաքային գործարշավը հաջողությամբ կենսագործելու համար։

Ադրկոմկուսի (բ) Ղարշրջկոմի և Ղարշրջվերհանձի միացյալ պլենումը պահանջում է հաշվի առնել անցյալ փորձերն ու գարնանացանի սկզբին տեղ գտած մենատնտեսական սեկտորի թերագնահատման սխալները, և մենատնտեսներին կազմակերպել՝ բերքահավաքային գործարշավը հաջողությամբ տանելու համար։

Ադրկոմկուսի (բ) Ղարշրջկոմի և Ղարշրջվերհանձի միացյալ պլենումը չի կասկածում, վոր Ղարաբաղի բոլշևիկյան կազմակերպությունը՝ Համկոմկուսի (բ) Անդրյերկրկոմի ու Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի անմիջական ղեկավարությամբ, Համկոմկուսի (բ) Կենտկոմի և ԽՍՀՄ-ի Ժողկոմխորհի վորոշումների գործնական իրացման հիմունքով, կատարելով բերքահավաքային գործարշավի պլանը, հավաքագրելով բանվորական և աշխատավորական մասսաներին, հենվելով առաջավոր կոլխոզնիկների և աշխատավոր մենատնտեսների վրա, կապելով բերքահավաքային գործարշավը տնտեսական-քաղաքական այլ խնդիրների հետ՝ կապահովի յերկրորդ հնգամյակի առաջին տարվա պլանների կատարումը։

# ԲԱՄԲԱԿԱՑԱՆԻ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՅԵՎ ԲԱՄԲԱԿԵՆԻՆԵՐԸ ՄՇԱԿԵԼՈՒ ՈՒ ՎՈՌՈԳԵԼՈՒ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ադրկոմկուսի (բ) Ղարշրջկոմի և Ղարշրջվերհանձի միացյալ պլենումը նշում է, վոր հիմնականում բավարար են կենսագործվել նախացանքային միջոցառումները և հաջողությամբ ավարտվել բամբակացանը — ագրոտեխնիկական միջոցառումների պահպանումով։ Ցանքն սկսվել է 1933 թվի մայիսի 25-ին և ավարտվել է նույն թվի հունիսի 7-ին։ Ցանված է ընդամենը 2515 հեկտար, այդ թվում կոլխոզների կողմից—1821 հեկտար և աշխատավոր մենատնտեսությունների կողմից—694 հեկտար։

Միացյալ Պլենումը նշում է, վոր առանձին տեղամասերում կրկնացանքի և ցանքի միջև (Մարդակերտ) կտրվածություն առեղծելու հետևանքով և սերմը յերես ցանելու պատճառով (Ներքին Զայլու, Թալիշ և այլն)՝ տեղի յեն ունեցել վոչ ժամանակին և անհամաչափ ծլումներ։

Պլենումը գոհունակությամբ է նշում, վոր՝ ձեռնարկված լրացուցիչ միջոցառումների շնորհիվ մայիսի 30-ից արդեն 2515 հեկտար ամբողջ տարածության վրա բամբակենիները սկսել են նորմալ աճել։

Ադրկոմկուսի (բ) Ղարշրջկոմի և Ղարշրջվերհանձի միացյալ պլենումը՝ լիապես և ամբողջապես յելնելով Համկոմկուսի (բ) Անդրերկրկոմի, Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի, ԱՍՖՍՀ-ի և ԱԽՍՀ-ի ժողկոմխորհների վորոշումներից և ընկ. ընկ. ՍՏԱԼԻՆԻ և ՄՈԼՈՏՈՎԻ ուղղակի դիրեկտիվներից ու ցուցմունքներից՝ Լեռնային Ղարաբաղի կուսկազմակերպության և առաջին՝ հերթին Մարդակերտի ռայկուսկազմակերպության հիմնական խնդիրներից մեկն է համարում բամբակենիների մշակույթի և վոռոգման բոլոր պրոցեսների ժամանակին և լրիվ կատարումը, ինչ բացառիկ և վճռական դեր ունի՝ բամբակի բերքատվությունը բարձրացնելու համար։

Ադրկոմկուսի (բ) Ղարշրջկոմի և Ղարշրջվերհանձի միացյալ պլենումը բամբակի մշակույթի անբավարար ընթացքն է նշում. ու մայիսի 25-ը քաղհանված էր միայն 1413 հեկ., իսկ նոսրացմանն ու կուլտիվացիային բոլորովին ձեռնամուխ չեն յեղել, ինչ Ադրկոմկուսի (բ) Մարդակերտի ռայկոմի, ռայգործկոմի և ՄՏ Կայանի դեմոբիլիզացիոն և անթույլատրելի վերաբերմունքն ու մշակույթի թերագնահատումն է վկայում։

Ադրկոմկուսի (բ) Ղարշրջկոմի և Ղարշրջվերհանձի միացյալ պլենումը վորոշում է.

1. Հանձնարարել Ադրկոմկուսի (բ) Ղարշրջկոմի բյուրոյին և Ի. Լ. Ղարաբաղի Շրջգործկոմի նախագահությանը՝ մի որվա ժամանակամիջոցում քննարկել և հաստատել Ադրկոմկուսի (բ) Մարդակերտի ռայկոմի և ռայգործկոմի վորոշումը՝ բամբակենու մշակույթի և վեգետացիոն վոռոգումների անցկացման գծով սահմանված ժամկետների և ձեռնարկվող միջոցառումների մասին։

2. Առաջարկել Ադրկոմկուսի (բ) Մարդակերտի ռայկոմին ընկ. Ցերեմ Ներսիսյանին, Մարդակերտի ռայգործկոմին—ընկ. Գրիգորյանին, և ընկ. Թյունյանին, ՄՏԿ—ընկ. Աֆանեսյանին՝ բոլոր անհրաժեշտ միջոցները ձեռնարկել առաջին քաղհանը մինչև հունիսի 1-ն ավարտելու և առաջին նոսրացումն ու առաջին կուլտիվացիան ավարտել հունիսի 5-ից վոչ ուշ։ Նախազգուշացնել հիշյալ ընկերներին, վոր հետագայում բամբակենու մշակույթի և վոռոգման յուրաքանչյուր պրոցեսի չկատարումը քննության է առնվելու, իբրև կուսակցության և կառավարության դիրեկտիվների կատարումից խուսափում, և հանցապարտները խստագույն պատասխանատվության են յենթարկվելու։

3. Առաջարկել Ադրկոմկուսի (բ) Մարդակերտի ռայկոմին և Մարդակերտի ռայգործկոմին՝ բամբակենու մշակույթի ժամանակ, առանձնապես նոսրացման և կուլտիվացիայի, ինչպես նաև վեգետացիոն վոռոգումների ժամանակ չթույլ տալ բամբակային տարածության մոտ 30 տոկոսն ունեցող մենատնտեսական սեկտորի թերագնահատումն ռայոնի առանձին աշխատակիցների և գյուղական կուսակցական ու խորհրդային առանձին կազմակերպությունների կողմից, նրանց ամենորյա և գործնական ոգնություն ցույց տալով և հաստատապես ու վճռաբար յուրաքանչյուր բամբակաբույծ մենատնտեսից պահանջել, կնքված կոնտրակտացիոն պայմանների հիմունքով, ագրոկանոնների լրիվ կատարումը։

4. Ցելնելով այս տարվա ջրային ռեսուրսների սակավության

հնարավորությունից, միացյալ պլենումը պահանջում է Մարդակերտի ամբողջ կուսկազմակերպությունից՝ առանձնապես ուժեղացված ուշադրություն դարձնել ջրային հարցին, հունիսի 1-ից մինչև 5-ը ընկած ժամանակամիջոցում անցկացնել բոլոր ջրարխների մաքրումն ու Շիխարխի վերանորոգումը այդ ժամանակամիջոցում ավարտելով այդ ջրարխների վրա կամուրջների և փականների (շլյուզների) կառուցումը:

Առաջարկել Ադրկոմկուսի (բ) Մարդակերտի ռայկոմին և Մարդակերտի ռայգործկոմին, ընկ. ընկ. Ներսիսյանի և Գրիգորյանի պատասխանատվությամբ, լիապես ապահովել ջրային միջոցները ռացիոնալ կերպով օգտագործելու մասին Համկոմկուսի (բ) Անդրերկրկոմի և Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի վորոշումների իրագործումը, այդ վորոշումների խախտման մեջ հանցապարտներին խստագույն պատասխանատվության յենթարկելով.

Առաջարկել Ի. Լ. Ղարաբաղի Շրջբանդյուղտեխչությանը, ընկ. Գրիգորյանի պատասխանատվությամբ, ռայկուսկազմակերպությունների հետ միասին, հնարավոր ժամանակամիջոցում վերանայել Մարդակերտի ՄՏԿայանի ջրային աշխատակիցների կազմը—այդպիսինն ուժեղացնելու ուղղությամբ:

5. Նշելով բամբակային տարածությունների առանձին տեղամասերում վնասատուների առկայությունը (նալիչին) և ՎԴՊ (վնասատուների դեմ պայքարող) ընկերության և ռայկազմակերպությունների թույլ պայքարն այդ վնասատուների դեմ, առաջարկել Շրջհողվարչությանը—ընկ. Պետրոսյանին, Մարդակերտի ռայգործկոմին—ընկ. Գրիգորյանին և ՄՏ Կայանին—ընկ. Ավանեսյանին բոլոր անհրաժեշտ միջոցները ձեռնարկել ՄՏ Կայանի աշխատանքներն ուժեղացնելու համար, և միաժամանակ հավաքագրել կոլխոզնիկներին ու մենատնտեսներին, թրթուրների, մարգային թիթեռների, մորեխների և այլ վնասատուների դեմ պայքարելու համար, ինչպես նաև բամբակային տարածություններում մինչև այժմ մնացած զանազան տեսակի մոլախոտերը վոչնչացնելու համար:

6. Կոլխոզներում աշխատանքի կազմակերպության հետագա բարձրացման և աշխատանքի գնահատման յոթ կարգյա սիստեմի լիակատար կենսագործման նպատակով, բոլոր տեսակի գյուղատնտեսական աշխատանքների համար 5 օրյա պլաններ կազմելու, բոլոր ագրոկանոնները կիրառելու և կոլխոզներում ստուգողական բրիգադներ ստեղծելու համար՝ առաջարկել Ադրկոմկուսի (բ) Մարդակերտի ռայ-



կոմին, ՄՏ Կայանին և քաղբաժնին անհապաղորեն քննարկել այս հարցերը, կոնկրետ, օպերատիվային միջոցառումներ մշակել, այն հաշվով, վոր մինչև հունիսի 5-ը այդ միջոցառումները հասցնվեն բրիգադներին, օղակներին և այլն:

7. Նշելով մի շարք աննորմալություններ ու ձգձգումներ բամբակաբուծներին բնամթերքներով—նատուրայով (առանձնապես արդյունաբերական ապրանքներով) և դրամով ավանսներ տալում, առաջարկել Ի. Լ. Ղարաբաղի Շրջանային և Մարդակերտի ռայոնական բանդյուղտեխչություններին՝ սույն թվի հունիսի 1-ից մինչև 5-ը կազմակերպել նատուրայով և դրամով տըրված ավանսների մասսայական ստուգումն և այդ ավանսների տրումը ձգձգելում կամ խախտելում հանցապարտներին դատական պատասխանատվության յենթարկել:

Ադրկոմկուսի (բ) ռայկոմ—ընկ. Անաստասյանին, ռայգործկոմ—ընկ. Գրիգորյանին, ՄՏԿ—Ավանեսյանին, ռայպատկոոպերացիա—ընկ. Գրիգորյանին՝ հետագայում ավանսավորման այնպիսի կարգ սահմանել, վոր ավանսների տրումն կապված լինի բամբակի մշակման գծով առանձին պրոցեսների կատարման հետ և այդպիսինները (ավանսները) տրվեն կոլխոզնիկներին բացառապես նրանց վաստակած աշխօրերի քանակի և վորակի համաձայն:

8. Հանձնարարել Ադրկոմկուսի (բ) ռայկոմին—ընկ. Կարապետյանին, քաղբաժնին—ընկ. Ավանեսյանին՝ ցանքի ժամանակամիջոցում բամբակաբուծների կուլտկենցաղային սպասարկումը կազմակերպելու բնագավառում ձեռք բերված հաջողություններն ամրապնդել և լրացուցիչ միջոցներ ձեռնարկել այդ հաջողություններն (դաշտերում տաք կերակուր, թեյ կազմակերպելը, գրականություն մատակարարելը, ռադիո դնելը, պատի թերթեր հրատարակելը, ագիտբրիգադներ ուղարկելը, դաշտերում կոոպերատիվային կրպակներ բաց անելը և այլն) ընդլայնելու և խորացնելու համար:

9. Ադրկոմկուսի (բ) Ղարշրջկոմի և Ղարշրջվերհանձի միացյալ պլենումը առաջարկում է Մարդակերտի ռայոնի կուսակցական և խորհրդային կազմակերպություններին՝ ամենալուրջ հսկողություն սահմանել կուլակունևորային տնտեսությունների կողմից բամբակի մշակույթն ու վոռոգումը ժամանակին կատարելու նկատմամբ, և այդպիսիների կողմից նվազագույն դիմադրության և նենգագույն (սաբոտաժի) դեպքում նրանց գործերը ձևակերպել և հանձնել պատժիչ մարմիններին—նրանց քրեյա-

1908/38589
ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ Гос. Публ. Библиотека ՀՍԽՀ — ССРА им. А. Мясникяна Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

կան պատասխանատվության յենթարկելու համար։

Առաջարկել դատախազությանը, դատարանին, ԳՆՊՆՈՒ-յին՝ բամբակի գծով բոլոր գործերը քննել բոլոր տեսակի հերթերից դուրս, անմիջապես տեղերում ցուցական դատավարություններ կազմակերպելով։

10. Ադրկոմկուսի (բ) Ղարշըրջկոմի և Ղարշրջվերհանձի միացյալ պլենումը գտնում է, որ բոլոր վերոհիշյալ միջոցառումների կատարումը և հենց դրանով յերկրին տալ 2000 տոնն բամբակ տալն ապահովելը հնարավոր է միայն յուրաքանչյուր կոմունիստի քաղաքական գիտակցությունն էլ ավելի բարձրացնելու, նրանց դասակարգային զգոնությունն էլ ավելի ուժեղացնելու, նրանց ագրոգիտելիքներն էլ ավելի խորացնելու միջոցով, կոլխոզային արտադրության վճռական տեղամասերում կուսակցական և կոմյերիտական ուժերը ճիշտ դասավորելով, արտադրության մեջ կոմունիստների և կոմյերիտականների ավանգարդային դերն ավելի բարձրացնելով, կուսակցության և կառավարության դիրեկտիվների կատարման շուրջը ընկ. ընկ. Ստալինի և Մոլոտովի ցուցմունքների իրացման համար կոլխոզային ակտիվի ուշադրության համախմբումով, վճռական պայքար մղելով ամեն տեսակի թերագնահատումների, ծուլության, լոդրության և կուլակային նենգադուլի (սաբոտաժի) դեմ։

---

# Ի. Լ. ՂԱՐԱԲԱՂԻ ԱՇՆԱՆ-ՁՄԵՌԱՅԻՆ ԿՈՒՍՈՒՍՄԱՆ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Քննարկելով աշնան-ձմեռային կուսուսման հանրագումարների մասին ընկ. Գևորգյանի զեկուցումը, Ադրկոմկուսի (բ) Ղարշըրջկոմի և Ղարշըրջվերհանձի միացյալ պլենումը մի շարք անվիճելի և խոշոր նվաճումներ է նըշում այդ բնագավառում, վորոնք ձեռք են բերվել Անդրկոմկուսի կուսկազմակերպության քաղաքական մակարդակը բարձրացնելու մասին Համկոմկուսի (բ) Կենտկոմի 1931 թվի հոկտեմբերի 31-ին վորոշումներն անշեղորեն կենսագործելու հիմունքով։ Այդ նվաճումները հիմնականում արտահայտվում են.

ա) Կուսակցության ցանցը ժամանակին և ճշտորեն կոմպլեկտավորելում, Համկոմկուսի (բ) Անդրյերկրկոմի և Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի կողմից սահմանված ժամկետից 10 որ առաջ պարապմունքներն սկսելում,

բ) Ինչպես կուսակցության մասսային նույնպես և կոմյերիտական ու անկուսակցական ակտիվին կուսկրթության ցանցով մեծ չափերով ընդգրկելում (փաստորեն հանրագումարման ժամանակ ստուգումն անցել է քաղկրթության ցանցում ընդգրկված ամբողջ կազմակերպության 85 տոկոսը—անցյալ տարվա 45 տոկոսի դիմաց),

գ) Ամենաուրեք ընթացիկ քաղաքականության խմբակներ կազմակերպելու և կուկազմակերպությունները մեծ չափով առարկայական խմբակների մեջ ընդգըրկելու փաստերի վերացման մեջ, ինչի հետևանքով կուսկազմակերպության կողմից աճել է հետաքրքրությունը դեպի ուսումը և իբրև այդ բանի հետևանք մակսիմալ չափերով կրճատվել է հոսունությունը (7 տոկոս անցյալ տարվա 69 տոկոսի դեմ), բարձրացել է հաճախումների տոկոսը (73 տոկոսյա տարեկան միջին հաճախում անցյալ տարվա 40 տոկոսյա հաճախումների դեմ),

դ) Վորակով համեմատորեն լավ պրոպագանդիստներ ջոկելում և նրանց պրոպագանդիստական կուրսերով անցկացնելում (անց են կացված ընդամենը կուսակցական և կոմյերիտական 225 պրոպագանդիստներ, կուսկրթական ցանցը ժամանակին, թե-

կուղ և վոչ լիապես, դասագրքերով և այլ գրականությամբ ապահովելում,

յե) Իբրև փորձ, մեթոդական փորձ կազմակերպելում (մեթոդական գրությունների մշակումը), պրոպագանդիստների սեմինարներ և դասընթաց-կոնֆերանսներ կազմակերպելում և իբրև հետևանք այդ բանի պրոպագանդայի վորակը մեծ չափերով բարձրացնելում։

Պլենումը նշում է, վոր այդ միջոցառումների հետևանքով շատ բանով է բարձրացել ուսման վորակը, կանոնավորվել է խմբակների աշխատանքների նորմալ ընթացքը (յուրաքանչյուր խմբակ միջին հաշվով ունեցել է 23 պարապմունք, ստուգումն անցածներից ծրագիրը լավ են յուրացրել 820 հոգի, բավարարից բարձր—447 հոգի, բավարար—2164 հոգի և վատ—778 հոգի։

Պլենումն առանձնապես նշում է Ադրկոմկուսի (բ) Ղարշրջկոմի կուլտպրոպի նվաճումները հեռակերպյա կոմ. ԲՈՒՀ-եր, հեռակերպյա խորհկուսդպրոցներ կազմակերպելում, իբրև կուսակցական կրթության բարձրագույն աստիճան, ընդգրկելով նրանցում 274 ունկնդրողի։

Միաժամանակ պլենումը նշում է նույնպես Համկոմկուսի (բ) Կենտկոմի պրոպխմբակի մեծ օգնությունը մարքս-լենինյան դաստիարակության գործում։

Այս բոլոր նվաճումների հետ միասին Ադրկոմկուսի (բ) Ղարշրջկոմի և Ղարշրջվերհանձի միացյալ պլենումը և հետևյալ հիմնական թերությունները է նշում.

1. Բոլոր ռայկոմները չե, վոր կարողացել են լիապես օգտագործել Շրջկոմի կողմից ձեռք բերված հաջողությունները—մարքս-լենինյան դաստիարակությանգործում հետագա և մեծ բեկումն առաջացնելու համար։

2. Մինչև այժմ բոլոր ռայկոմները չե, վոր հաշվի յեն առել այն հանգամանքը, վոր կուլտպրոպբաժվարի հետ միասին կուսկրթության համար պատասխանատու յեն և կուսռայկոմի կազմն ու կուսռայկոմի քարտուղարը (Մարդակերտ, Շուշի), այս տեղից էլ բղխել են անբավարար հսկողությունն ու օգնությունը ռայկոմների կողմից-ռայոններում կուսկրթության գործին։

3. Պլենումը նշում է, վոր անբավարար չափերով է աշխատանք տարվել թեկնածուների մեջ։ Թեկնածուներից կայուն բոլշևիկներ դարբնելու և նրանց գաղափարա-քաղաքական մակարդակը բարձրացնելու մասին «Պրավդա»-յի կողմից առաջադրված նշանաբանը վերիպել է կուսռայկոմների ուշադրությունից, ինչի հետևանքով և անբավարար չափերով են ընդգրկվել թեկնածուները թեկնածվական դպրոցներում։



4. Պլենումը նշում է, վոր դարնանացանն սկսելու կապակցությամբ ռայոններում խմբակների պարապմունքների դադարեցման բազմաթիվ փաստեր են նըկատվել և նկատվում են, վորոնց դեմ կուսռայկոմների կողմից համապատասխան միջոցներ չեն ձեռնարկվում, ինչ միանգամայն անթույլատրելի յե, իբրև կուսուսման անընդհատության մասին Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի 1932 թվի մայիսի 12-ի դիրեկտիվի ուղղակի խախտումն։ Պլենումն այս յերևույթը գնահատում է, իբրև քաղաքական-տնտեսական խնդիրների պարզորոշ հակադրություն կուսկրթության գործին։

5. Խախտվել է Ադրկոմկուսի (բ) Ղարշրջկոմի վորոշումը՝ այլ աշխատանքների համար պրոպագանդիստների հավաքագրման և գործուղման անթույլատրելիության մասին, կուսռայկոմների կուլտպրոպբաժիններին զրկել են (մշտական հավաքագրումներ, ցանքի գործարշավի ընթացքում առանց հեռանալու մի գյուղի ամրացնելը և այլն) քաղցանցը ղեկավարելու հնարավորությունից (Ադրկոմկուսի (բ) Մարդակերտի և Ստեփանակերտի ռայկոմների կողմից)։

6. Ամեն տեղ չե, վոր կատարվել են Ադրկոմկուսի (բ) Ղարշրջկոմի վորոշումները բջջային կուլտպրոպներ առանձնացնելու մասին, ինչի հետևանքով շատ բջիջներում բացակայում են կուսակցական և կոմյերիտական ուսման անհրաժեշտ հսկողությունն ու օգնությունը։

Պլենումը նորից է նախազգուշացնում Ադրկոմկուսի (բ) Ի. Լ. Ղարաբաղի ռայկոմներին, առանձնապես Մարդակերտի և Շուշվա ռայկոմներին, վոր կուսլուսավորության համար պատասխանատվություն է կրում ռայկոմն ամբողջապես—քարտուղարի գլխավորությամբ, վոր ամառվա ընթացքում կուսկրթության դադարեցումը գնահատվելու յե, իբրև հակակուսակցական արարք, վորի համար և պլենումը հանձնարարում է Ադրկոմկուսի (բ) Ղարշրջկոմի բյուրոյին՝ սույն վորոշումը խախտողներին կուսակցական խիստ պատասխանատվության յենթարկել։

Պլենումը նշում է, վոր ամառվա ընթացքում ամբողջ աշխատանքը պիտի անցկացվի կուլտկրթության գործում բոլշևիկյան բեկումն ստեղծելու նշանի տակ, իբրև կուսուսման համար նախապատրաստական աշխատանք—կուսակցության անդամների ու անդամության թեկնածուների և կոմյերիտականների գաղափարա-քաղաքական կվալիֆիկացիան բարձրացնելու գծով։

Ադրկոմկուսի (բ) Ղարշրջկոմի և Ղարշրջվերհանձի միացյալ պլենումն առաջարկում է Ադրկոմ-

կուսի (բ) Ի. Լ. Ղարաքաղի ռայկոմներին, հաշվի առնելով ձմեռային ցանցի աշխատանքներում յեղած թերությունները բոլոր անհրաժեշտ միջոցները ձեռնարկել ամառվա ընթացքում մարքս լենինյան դաստիարակության աշխատանքը լայնորեն ծավալելու ուղղությամբ, բոլոր պայմանները ստեղծելով կուսակցության և կոմյերիտմիության կազմակերպությունները 100 տոկոսով կուսուսման ցանցով ընդգրկելու համար, հատուկ ուշադրություն դարձնելով թեկնածվական դըրոցներում թեկնածուներին լիապես ընդգրկելուն — այն բջիջներում, վորտեղ յերեք և ավելի թեկնածուներ կան։

Ադրկոմկուսի (բ) Ղարշրջկոմի և Ղարշրջվերհանձի միացյալ պլենումն առաջարկում է Ադրկոմկուսի (բ) Ի. Լ. Ղարաքաղի բոլոր բջիջներին կատաղի պայքար մղել քաղխմբակների պարապմունքները խախտելու փաստերի դեմ և վոչ մի դեպքում թույլ չտալ կուսուսման ուսակարգի խախտումն, յուրաքանչյուր առանձին խմբակի աշխատանքները խստորեն հաշվառման յենթարկելով։

Պատասխանատվությունը բարձրացնելու և հսկողությունն ուժեղացնելու նպատակով առաջարկել Ադրկոմկուսի (բ) Ղարշրջկոմի կուլտպրոպբաժնին կուսուսման ցանցով ընդգրկելու հըր կեչ թվերի հետ տեղերին հասցնել յուրաքանչյուր տիպի խըմբակի և դպրոցի համար մի ամավա մինիմում պարապմունքների սահմանված հոկիչ թվերը — մինչև նոր ուսումնական տարին ծրագրերը լիապես ավարտելու համար հնարավորությունները ստեղծելու հաշվով, և խստորեն հետևվել, վոր այդպիսիները ճշտորեն կիրառվեն ռայոնների կողմից։

Պարտավորեցնել Ադրկոմկուսի (բ) Ի. Լ. Ղարաքաղի ռայկոմների քարտուղարներին՝ ռայկոմների նիստերում ինֆորմացիա լսել յուրաքանչյուր ամսվա համար ուսման ընթացքի մասին։

Հավանություն տալ Ադրկոմկուսի (բ) Ղարշրկոմի Կուլտպրոպի միջոցառումներին — ամառվա ընթացքում կուսակցական կրթության ծավալման և աշխատանքի ձևերի ուղղությամբ։ Առաջարկել Ադրկոմկուսի (բ) Ղարշրջկոմի կուլտպրոպբաժնին ամառային բոլոր խմբակների ծրագրերի մեջ մտցնել, իբրև հիմնական ծրագրային հարց, և կուսակցության ծրագրի ու կանոնադրության ուսումնասիրությունը, ինչի համար առաջարկվում է նրան (Կուլտպրոպին) ժամանակին կուսակցության ծրագրի և կանոնադրության համապատասխան քանակը ձեռք բերել և այդպիսիներով հագեցնել կուսուսման ամբողջ ցանցը։

Առաջարկել Ադրկոմկուսի (բ)



Ղարշրջկոմի կուլտպրոպբաժնին, արդեն իսկ յեղած նյութերի հիմունքով, պրոպագանդիստական աշխատանքներից ազատել պրոպագանդիստական աշխատանքներում իրենց չարդարացրած անձներին։

Առաջարկել Ադրկոմկուսի (բ) Ի. Լ. Ղարաքաղի բոլոր ռայկոմների քարտուղարներին, իրենց անձնական պատասխանատվությամբ, ազատված պրոպագանդիստների տեղ պատրաստված և փորձված կուսակցականներից առանձնապես խորհկուսդպրոցներն հաջողությամբ ավարտածներից նոր ընկերներ առաջադրել։

Ադրկոմկուսի (բ) Ղարշրջկոմի կուլտպրոպբաժնին՝ բոլոր անհրաժեշտ միջոցները ձեռնարկել, վորպեսզի ամառվա ընթացքում միամսյա դասընթացների միջոցով հարյուր պրոպագանդիստներ (այդ թվում և կոմյերիտպրոպագանդիստներ) բաց թողնվեն, ինչպես նաև ուժեղացնել նրանց ցույց տրվող մեթոդական օգնությունը։

Ադրկոմկուսի (բ) Ղարշրջոմի կողմից կուսցանցին տրվող մեթոդական օգնությունն ուժեղացնելու և այդ ցանցի աշխատանքներին անմիջական օգնություն ցույց տալու նպատակով՝ առաջարկել Ադրկոմկուսի (բ) Ղարշրջկոմի բյուրոյին՝ կուսկըրթության գծով բյուջեին լրացնել հետևյալ միավորներով. մեթոդական հանձնաժողովի մի նախագահ, մի շրջանային պրոպագանդիստ և կենտրոնական կուսկաբինետի մի վարիչ։

Կուսակցական և կոմյերիտական ակտիվի վերապատրաստման գծով առաջարկել Ադրկոմկուսի (բ) Ղարշրջկոմի (բ) Կուլտպրոպբաժնին, կազմբաժնի հետ միասին 1933 թվին 900 մարդ անցկացնել կարճատև հատուկ դասընթացների միջոցով։

1932-33 ուսումնական տարում հեռակասորյա Կոմ. ԲՈՒՀ-եր, Խորհկուսդպրոցներ և շրջիկ դպրոցներ կազմակերպելու գծով հավանություն տալով Ադրկոմկուսի (բ) Ղարշրջկոմի Կուլտպրոպբաժնի աշխատանքներին, անհրաժեշտ համարել այդպիսիների հետագա ընդլայնումը։ Այդ նպատակով առաջարկել Ադրկոմկուսի (բ) Ղարշրջկոմի Կուլտպրոպբաժնին անհապաղորեն ձեռնարկել այս տարի յերեք հեռակասորյա Կոմ. ԲՈՒՀ-եր (Շուշում և Ստեփանակերտում) (130 ունկնդիրների ընդգրկումով), 6 խորհկուսդպրոցներ (200 ունկնդիրների ընդգրկումով), վեց շրջիկ դպրոցներ (24 բջիջներ և 600 ունկնդիրների ընդգրկումով) կազմակերպելուն և Հադրութի ռայոնում մի սատացիոնար Խորհկուսդպրոց կազմակերպելուն։ Ադրկոմկուսի (բ) Ղարշրջկոմի Կուլտպրոպբաժնին՝ անհրաժեշտ միջոցները ձեռնար-

կել հիշյալ միավորները պատրաստած ղեկավարներով և դասատուներով ապահովելու համար։

Առաջարկել Ադրկոմկուսի (բ) Ղարշրջկոմի բյուրոյին՝ օգտագործել բյուջետով բաց թողնըվող միջոցները Շրջկոմի Կուլտպրոպբաժնին կից 10 հոգուց պըրոպագանդիստական խմբակ կազմակերպելու ուղղությամբ, նրանց մի տարով ամրապնդելով վորոշակի գյուղերի։

Պլենումը կտրականապես արգելում է պրոպագանդիստների ամեն տեսակի հավաքագրումներին ու Ադրկոմկուսի (բ) Ի. Լ. Ղարաբաղի ռայկոմների կուլտպրոպ բաժինների օգտագործումն վոչ իրենց ուղղությամբ, և առաջարկում է բոլոր ռայկոմների քարտուղարներին արմատապես վերացնել այդ փաստերը։

Խնդրել Ադրկոմկուսի (բ) Կենտկոմին անպայման Ի. Լ. Ղարաբաղ ղործուղել Կենտկոմի շտաբային պրոպխմբակին՝ 1933—34 ուսումնական տարում կուսկրթության աշխատանքներին ոգնելու համար։

Կոմյերիտկրթության ցանցին ոգնելու գծով աշխատանքը վոչ բավականաչափ համարելով, առաջարկել բոլոր կուսռայկոմներին՝ ուժեղացնել կոմյերիտկրթության ցանցի ոգնությունն ու ղեկավարությունը, կոմյերիտխմբակներին ղեկավարելու համար կուսակցական վորակյալ պրոպագանդիստներ առանձնացնելով։

Ադրկոմկուսի (բ) Ղարշրջկոմի (բ) Կուլտպրոպբաժնին՝ հատկապես քննել ամառվա ընթացքում կոմյերիտ կրթության ցանցի ընդարձական հարցը և մաքսիմալ չափով ոգնել կոմյերիտկազմակերպության՝ կոմյերիտականներին գլխովին ընդգրկելու և ամբողջ կոմյերիտկազմակերպության մարքս-լենինյան դաստիարակության վորակը լավացնելու գործում։

Ի նկատի ունենալով խմբակներում մշակվող հարցերի շատ հետամնացությունը գյուղի, կոլխոզի և ձեռնարկության գործնական խնդիրների հետ կապակցությունից, առաջարկել Ադրկոմկուսի (բ) Ղարշրջկոմի Կուլտպրոպբաժնին և Ադրկոմկուսի (բ) Ի.Լ. Ղարաբաղի բոլոր ռայկոմներին անհրաժեշտ բեկումն ստեղծել այս մասում մեթոդական գրությունների մեջ կոնկրետ ուրինակներ մտցնելու, ինչպես նաև [illegible] սեմինարներ կազմակերպելու ճանապարհով և այլն։

Առաջարկել Ադրկոմկուսի (բ) Ի.Լ. Ղարաբաղի բոլոր ռայկոմներին՝ ուժեղացնել ստորին կուսպրոպողակները, բջիջների կուսպրոպաշխատանքների համար լավագույն և փորձված կուսակցականներ առաջադրելով և ուժեղացնելով նրանց ամենորյա կոնկրետ ու ոպերատիվ ղեկավարությունը կուսռայկոմների կողմից։

---

Гос. Публ. библ. ... им. А. Мясникяна ... Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ [illegible]



ՀՀ Ազգային գրադարան
NL0186613